ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆՆ ՈՒ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նվիրվում է Թորոս Թորամանյանի ծննդյան 150-ամյակին

«Մեր պատմական հայրենիքում ամենուրեք սփռված հնապատմական հուշարձանները, որ հայ ցեղի ու մտքի արտադրությունն են, նրա բազմադարյան կուլտուրական կյանքի ապացույցները՝ հանդիսանում են հայ ժողովրդի գերագույն հարստությունը եւ նորանոր ստեղծագործությանց անսպառ աղբյուրը նրա բոլոր սերունդների համար:

Ուստի հանուն գիտության եւ առհասարակ մեր երկրի կուլտուրական առաջիւաղացման՝ համարելով մեր երկրի հնությունների պահպանությունը Հայաստանի պետական իշխանության գլխավոր պարտականություններից մեկը՝ այսու դիմում ենք Ձեզ, պարոն նախարար, եւ խնդրում միջնորդել նախարարների խորհրդի առաջ՝ կազմակերպելու վերոհիշյալ նպատակի համար հատուկ մարմին՝ «Հնությունների պետական պահպանության կոմիտե» եւ նրան վերապահել ամենայն իրավասություն հնությունների պահպանության եւ պաշտպանության վերաբերյալ:

Սույն կոմիտեն, հանդիսանալով իբրեւ զարգացումն հանրային կրթության եւ արվեստի նախարարության «հնությունների պահպանության բաժնի», լինելու է գիտության եւ գեղարվեստի ականավոր ներկայացուցիչներից, որի առաջին կազմը կնշանակվի կառավարությունից:

Ընդսմին ներկայացնում ենք Ձեր ուշադրությանը մեր կազմած օրինագիծը եւ կոմիտեի կազմի ու պարտականության ցանկն ու նախահաշիվը» [1]:

Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան, Ալեքսանդր Թամանյան, Աշխարհբեկ Քալանթար. նրանք էին 1920 թ. հունիսի 19-ի ՀՀ հանրային կրթության եւ արվեստի նախարարին ուղղված՝ հնությունների պահպանության պատմության համար բեկումնային այս փաստաթղթի հեղինակները: Իհարկե, նվիրյալների այս շարքը դեռ պետք է ընդլայնվեր այնպիսի տիտաններով, ինչպիսիք էին՝ Թորոս Թորամանյանը, Հովսեփ Օրբելին, Մարտիրոս Սարյանը, Նիկողայոս Մառը, ովքեր գիտակցում էին «հայ ցեղի ու մտքի արտադրության» պահպանության անհրաժեշտությունը:

Բազմաթիվ քաղաքական խնդիրներին ու ճգնաժամի ծանր պայմաններին համընթաց՝ 1920 թ. հուշարձանների պահպանությունը դրվում է գիտական հիմքերի վրա: Նպատակն արդար էր, բայց ուղին ամենեւին էլ դյուրին չէր լինելու: Հայաստանի առաջին Հանրապետության կործանումը ստիպում է դադարեցնել հնությունների պահպանության բաժնի գործունեությունը, իսկ բաժնի վարիչ Ալեքսանդր Թամանյանին՝ տեղափոխվել Թավրիզ:

Հատկանշական է այն փաստը, որ Թամանյանի սերն ու հետաքրքրությունը հայկական ճարտարապետության հանդեպ ունեին ավելի խորը արմատներ: Ըստ Մագդալինա Թամանյանի (Ալ. Թամանյանի քույրը) հուշերի՝ մի անգամ Սանկտ-Պետերբուրգում դեռեւս ուսանողական տարիներին Թամանյանը, թերթելով Հայաստանի հուշարձաններին նվիրված ալբոմը, ասել է. «Ա՛յ կտեսնեք, ես կապրեմ Հայաստանում եւ կկառուցեմ այնտեղ»[2]: Անհրաժեշտ է նշել, որ տվյալ ժամանակաշրջանում նա դեռեւս չէր եղել Հայաստանում: Ռուսաստանում մասնագիտական փառքի արժանացած 41-ամյա վարպետն առաջին անգամ ոտք դրեց Հայաստան առաջին հանրապետության օրոք՝ 1919 թ. հուլիսին: Եկավ առանց հրավերի, ճիշտ ժամանակին: Տեղի ունեցավ այն ալբոմի հերոսների եւ Ալեքսանդրի երկար սպասված հանդիպումը: Շատ չանցած նա էր դառնալու խնամակալն այն հուշարձանների, որոնք «հայ ցեղի ու մտքի արտադրությունն էին» եւ իր «նոր ստեղծագործությանց անսպառ աղբյուրը»: Բայց մինչ այդ Թամանյանն արդեն ունեցել էր որոշակի առնչություն հայկական ճարտարապետության հետ: 1908 թ. հայագետ, արեւելագետ, լեզվաբան, հայ մշակույթին ու պատմությանն անգնահատելի ծառայություն մատուցած Ն. Մառը Թամանյանին է հանձնարարում Անիում կառուցվելիք թանգարանի

1 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 16, թ. 1:
2 **Լ. Ջորյան**, Ալեքսանդր Թամանյան, Երեւան 1960, էջ 81:

նախագիծը: Վերջինիս էսքիզային փնտրտուքները երիտասարդ ճարտարապետին կապում են հայկական ճարտարապետության հետ: Սրա վառ ապացույցն է 1913 թ. իշխանուհի Ելիզավետա Ֆեոդորովնայի պատվերով Հռոմում կառուցվելիք ռուսական ուղղափառ եկեղեցու նախագծի տարբերակներից մեկը, որն իր թմբուկի ծավալով եւ հովհարաձեւ վեղարով, անշուշտ, առաջին հայացքից հայկական առաքելական եկեղեցի է հիշեցնում: Այս նախագծից 6 տարի անց՝ 1919 թ., վերջապես ստեղծվել էր հնարավորություն ուսումնասիրելու եւ բնօրրանում հաղորդակցվելու ազգային ճարտարապետության հետ: Բայց այս ամենը պետք է ընդմիջվեր երկամյա Թավրիզյան շրջանով:

Թավրիզում հաստատվելուց եւ աշխատանքի անցնելուց որոշ ժամանակ անց սկսվում են խորհրդայնացված Հայաստանի իշխանությունների եւ մտավորական ընկերների հորդորները Թամանյանին հայրենիք վերադարձնելու կապակցությամբ: Սրանց հետեւում է 1922 թ. փետրվարի 12-ի՝ հայրենիք վերադառնալու մասին Ալ. Թամանյանի պատասխան նամակը՝ ուղղված Ս. Լուկաշինին[3]: Այսպիսով՝ սկսվում է միանգամայն նոր շրջան թե՛ ճարտարապետի կյանքի ու գործունեության, թե՛ հնությունների պահպանության համար:

1923 թ. ապրիլին Թամանյանը վերադառնում ու ներգրավվում է հայրենիքի վերաշինման գործին: Արդեն մայիս ամսին ստանձնում է Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի տնտեսական խորհրդակցությանը կից տեխնիկածրագրային գործերի խորհրդատուի պաշտոնը: Նույն թվականի հունիսին նշանակվում է Ժողկոմխորհին կից Գերագույն տեխնիկական բաժնի վարիչ, իսկ դեկտեմբերի 30-ի Լուսժողկոմի թ. 107 հրամանով՝ Հնությունների պահպանության պետական կոմիտեի (ՀՊՊԿ) նախագահ[4]: Համատեղելով այս եւ հետագայում սպասվելիք պետական պաշտոններն ու մայրաքաղաքի վերակառուցման լայնածավալ նախագիծը՝ Թամանյանը սկսում է բուռն գործունեություն ծավալել ՀՊՊԿ-ում: Պետք էր մշակել հստակ կանոնադրություն, իրավասությունների ու պարտականությունների ցանկ, որոնք կհամակարգեին կոմիտեի գործունեությունը: Չմոռանալով կոմիտեի նախախորհրդային կարճատեւ գործունեությունը՝ ներկայացնենք Հանրային կրթության եւ արվեստի նախարարին ուղղված հնագիտական աշխատանքների կազմակերպման մասին Ալ. Թամանյանի գրությունից կարեւոր հատվածներ: Հունիսի 19-ից ընդամենը մի քանի օր անց՝ հուլիսի 8-ի այս գրության մեջ արդեն մշակվել էր առաջին արշավախմբի գործունեության ծրագիրը, այն էր.

3 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 115, ց. 1, գ. 199, թ. 37:
4 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 130, ց. 1, գ. 52, թ. 24:

«1. Հնությունների ամբողջական ցուցակագրումը, որ կատարվելու է անհրաժեշտ ու ամփոփ նկարագրությամբ հանդերձ՝ մշակած ձևով, ճարտարապետական ընդհանուր չափագրությամբ, ֆրեսկոների /որմնանկարներ/ արտանկարությամբ, լուսանկարչությամբ:

2. Պարզել հուշարձանների վիճակն ու դիմացկունության չափը եւ քանդման վտանգին ենթակա հուշարձաններին, ըստ հնարավորության, ցույց տալ առաջին օգնությունը:

3. Տեղային հնադարանների հիմնումը, թափված ու ցրված հնությանց բեկորների ժողովումն ու դասավորումը հարմար շինությունների մեջ՝ իրենց վայրերում:

4. Հսկողության կազմակերպումը՝ հուշարձանների պահպանությունը հատուկ պահակներով» [5]:

Ըստ կոմիտեի որոշման՝ արշավախումբը պետք է կազմված լիներ 3 առանձին խմբերից՝ համապատասխան մասնագետներով, որոնք միաժամանակ կգործեին 3 տարբեր շրջաններում: Այս ծրագիրը հարմար հիմք էր Խորհրդային Հայաստանի ՀՊՊԿ-ի 1924 թ. փետրվարի 2-ի կանոնադրության[6] համար: Վերջինս ավելի լայնածավալ ու մանրամասն էր մշակված: Այն արդեն ավելի լայն հնարավորություն էր տալիս կոմիտեին ու հզոր միջոց հանդիսանում 1923 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետի նպատակներին հասնելու համար: Սրան հետեւում են մի քանի տասնյակ ծրագրեր, նախագծեր, գրություններ ու նամակներ Հայաստանի կառավարությանն ու ոլորտի մասնագետներին, ինչպիսիք են՝ *«Ա. Թամանյանի նամակը Ն. Մառին՝ Հայաստանում կատարվելիք հնագիտական աշխատանքները համատեղ անցկացնելու մասին»*[7], *«Ա. Թամանյանի գրությունը Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին՝ Էջմիածնի Մատենադարանի շենքի ապահովության մասին»*[8], *«Ա. Թամանյանի նամակը Էջմիածնի Գավգործկոմի նախագահին՝ Թ. Թորամանյանի հնագիտական աշխատանքներին աջակցելու համար»*[9], *«Ա. Թամանյանի գրությունը Լուսժողկոմ Ա. Մռավյանին՝ Զվարթնոցի հնագիտական շրջանի պահպանությունը ապահովելու մասին»*[10], *«Հնությունների Պահպանության Կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի գրությունը Ժողկոմխորհի նախագահ Ս.*

5 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 17, թ. 1:
6 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 281, թ. 54:
7 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 1063, ց. 1, գ 10, թ. 17:
8 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 39, գ. 698, թ. 10:
9 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 130, ց 1, գ. 33, թ. 22:
10 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 182, թ. 24:

Լուկաշինին՝ Սարդարի մզկիթը պահպանելու անհրաժեշտության մասին»[11], *«Հնությունների Պահպանության Կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի գրությունը Լուսժողկոմ Ա. Մռավյանին՝ հայկական պատմական հուշարձանները այլ վայրերից Հայաստան բերելու մասին»*[12], *«Ա. Թամանյանի նամակը Ս. Տեր-Հակոբյանին՝ Սևանի շրջանում հայտնաբերված հիերոգլիֆյան արձանագրությունների մասին կարծիք հայտնելու խնդրանքով»*[13], *«Հնությունների Պահպանության Կոմիտեի եւ Կովկասյան Պատմա-հնագիտական ինստիտուտի միջեւ կնքված համաձայնագրի նախագիծը»*[14], *«Հնությունների Պահպանության Կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի գրությունը Լուսժողկոմ Ա. Մռավյանին՝ Ջանֆիդա գյուղում գտնված հնագիտական արժեք ներկայացնող քարի մասին»*[15], *«Հնությունների Պահպանության Կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի գրությունը Լուսժողկոմ Ա. Մռավյանին՝ եկեղեցիներն իբրեւ ակումբ գործածելն արգելելու մասին»*[16], *«Հնությունների Պահպանության Կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի գրությունը Ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին՝ Երեւանի բերդի պարիսպները պահպանելու անհրաժեշտության մասին»*[17] եւ այլն: Այս փաստաթղթերն ուրվագծում են ՀՊՊԿ-ում Ալ. Թամանյանի գործունեության մասին պատկերը:

ՀՊՊԿ-ի կանոնադրության ընդունման օրից (1924 թ. մարտի 20) Թամանյանի նախագահությամբ առաջին 4 ամիսների (ապրիլ-հունիս) ընթացքում կոմիտեն, լինելով դեռեւս առանց նյութական միջոցների, 12 նիստում քննում եւ մշակում է մի շարք խնդիրներ՝ հնությունների պահպանության, հաշվառման եւ ուսումնասիրության վերաբերյալ[18]: Աշխատելով կապվել հանրապետության բոլոր շրջանների վարչական մարմինների հետ՝ տպագրում է դեկրետը, կանոնադրությունը եւ ցրում վարչական օրգաններին՝ մինչեւ բոլոր գյուղերի խորհուրդների նախագահները: Հաշվառման գործը իրականություն դարձնելու համար կոմիտեն ձեռնամուխ է լինում հնագիտական արշավախումբ կազմելու գործին: Նյութական միջոցներ ստանալուն պես օգոստոս ամսին

11 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 39, գ. 558, թ. 131:
12 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 282, թ. 64:
13 Պատմության եւ կուլտուրայի հուշարձանների պահպանության վարչության արխիվ, գ. 52, թ. 13
14 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 937, թ. 41:
15 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 282, թ. 72:
16 Պատմության եւ կուլտուրայի հուշարձանների պահպանության վարչության արխիվ, գ. 77, թ. 6
17 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 104, թ. 116:
18 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 38, գ. 140, թ. 24:

սկսվում են աշխատանքները: Կոմիտեի հինգ արշավախմբերը, միաժամանակ աշխատելով տարբեր վայրերում, հաշվառում ու ցուցակագրում են Էջմիածնի, Արագածի, Ապարանի, Լոռի-Փամբակի եւ Դիլիջանի (մասամբ) շրջանները: Հաշվառման ընթացքում տալիս են իրենց հանդիպած հազարավոր հուշարձանների համառոտ նկարագրությունները, նշում են հատակագծային չափերը, ինչպես նաեւ կարեւոր մանրամասնություններ, լուսանկարում ընդհանուր տեսարանները եւ անհրաժեշտ մանրամասնությունները (մոտ 500 լուսանկար), կարդում, ընդօրինակում եւ հաշվառում են 3000-ից ավելի արձանագրություններ: Քայքայվող եւ քանդման վտանգի առաջ կանգնած բոլոր հուշարձանները լինում են մի քանի կարգի եւ տեղում պարզվում օգնության շտապողականության չափը եւ այն միջոցները, որոնք անհրաժեշտ են դրանց կործանումից խուսափելու համար: Միաժամանակ, նկատի ունենալով մեր բոլոր հուշարձանների սաստիկ վտանգված պահպանությունը՝ հաշվառման ենթարկված շրջանների բոլոր հնագիտական կարեւոր կետերում նշանակվում են հատուկ ներկայացուցիչներ տեղական գործիչներից՝ հիմնականում ուսուցիչներից եւ կուսակցականներից:

Կատարված հաշվառման աշխատանքները երեւան են հանում չափազանց մեծ քանակությամբ այնպիսի նյութեր, որոնք նորություն էին գիտության համար եւ գիտական շատ մեծ արժեք էին ներկայացնում, ինչպիսիք են՝ Արագածի եւ Լոռու նախապատմական շրջանի (հատկապես՝ քարեդարյան) մեգալիթյան հուշարձանները, ջրաբաշխական համակարգի եւ ջրի պաշտամունքին վերաբերող շատ առատ մնացորդները, ինչպես նաեւ պատմական շրջանի մշակութային խոշորագույն կոթողները:

Միայն այս 4 ամսվա արդյունքը, անկասկած, մեզ թույլ է տալիս պատկերացում կազմել ՀՊՊԿ-ի անդամների տրամադրվածության եւ հաստատակամության մասին: Այս ամենի հետ մեկտեղ պետք է նաեւ երախտիքի խոսք ուղղել պետական գործիչներին՝ Ա. Մռավյանին, Ա. Հովհաննիսյանին եւ Ս. Լուկաշինին, ոչ միայն իրենց իրավասությունների շրջանակներում ՀՊՊԿ-ին օժանդակելու, այլեւ Թամանյանին հայրենիք վերադարձնելու ջանքերի համար: Իսկ Թորոս Թորամանյանի հետ ջերմ ու մտերիմ հարաբերությունները վեր էին սովորական համագործակցությունից: Նրանց պարբերական հանդիպումների թեման հայկական ճարտարապետությունն էր, ՀՊՊԿ-ի գործունեությունը: Եւ քանի՛-քանի՛ հուշարձաններ արժանացան այս անգերազանցելի զույգի համագործակցությունից սերված ուսումնասիրություններին ու վերականգնման աշխատանքներին, որոնց ֆիզիկական իրականացման պարագայում մեր ու հաջորդ սերունդների անելիքը կլիներ հարյուրամյակների աշխատանք:

Այսպիսին է հայ պատմամշակութային ժառանգության պահպանման գործում Ալեքսանդր Թամանյանի անցած ճանապարհի համառոտ նկարագիրը: Ճանապարհ, որի դերը ճարտարապետի ստեղծագործության մեջ տեսանելիից ավելին է: Ճանապարհ, որի շնորհիվ Երեւանի ՀԷԿ-ի, Ժողտան, Կառավարական տան ճակատներին հայտնվեցին «հայ ցեղի ու մտքի արտադրության» վերածնված կամարը, խոյակը, զարդանախշն ու քարի լեզուն:

РЕЗЮМЕ

Подчеркивая важность защиты и истории памятников необходимо упомянуть тех лиц, чья деятельность поспособствовала развитию научных исследований армянских архитектурных и археологических памятников. Основание КОМИТЕТА ПО ОХРАНЕ ДРЕВНОСТЕЙ АРМЕНИИ, учредители которого - выдающиеся деятели, действительно является одним из наиболее важнейших факторов в деле сохранения древностей.

В статье представлена краткая история формирования КОМИТЕТА ПО ОХРАНЕ ДРЕВНОСТЕЙ АРМЕНИИ, важность его создания, роль Ал. Таманяна в этом комитете и влияние армянской историко-архитектурного наследия на его творчество. Статья полностью основана на архивных материалах.

SUMMARY

Giving due diligence to the preservation of monuments, as well as their history, it is crucial to mention one by one all those individuals who could manage to prepare scientific basis for the study of Armenian architectural and archaeological monuments. The establishment of the COMMITTEE OF PROTECTION OF ARMENIAN ANTIQUITIES is, indeed, one of the most important cornerstones of the preservation of antiquities, and the founders of this institution are outstanding individuals.

This article briefly presents the history of formation of THE COMMITTEE OF PROTECTION OF ARMENIAN ANTIQUITIES, its significance and Al. Tamanyan's role in this committee. The article also represents the influence of Armenian historic-architechtural heritage on his creative activities. The article is wholly based on archival materials.